Ընտրողների գրացումն իրականացնող հանձնաժողովի անդամի գործառույթները

(Ընտրական օրենսգիրք՝ հոդված 65)

- Ընտրողին խնդրեք ներկայացնել.
  - ✓ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
  - ✓ հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի, դեպքում՝ տարհանվածի վկայականը՝ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ:
- Ստուգե՛ք, թե ընդգրկված է արդյոք ընտրողը ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակի մեջ, և համեմատե՛ք ընտրողի անձնական համարը ընտրողների ցուցակում առկա համարի հետ:
- Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում առկա ընտրողի հաշվառման տվյալների և ընտրողների ցուցակում ընդգրկված տվյալների համապատասխանությունը:
- Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում և ընտրողների ցուցակում առկա լուսանկարների և ընտրողի դեմքի իրար հետ համապատասխանությունը:
- Եթե ընտրողն ընդգրկված է ընտրողների ցուցակի մեջ, ընտրողին արե՛ք նշմարում:
- Վավերացրե՛ք ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները (դարձերեսին, դրա համար հատկացված տեղում) գրանցումն իրականացնողի կնիքով:
- Ստորագրե՛ք ընտրական քվեաթերթիկի/քվեաթերթիկների ետին էջում:
- Ընտրողների ցուցակում ստորագրությամբ հավաստե՛ք ընտրական քվեաթերթիկի/քվեաթերթիկների հատկացումը:
- Խնդրե՛ք ընտրողին, ընտրողների ցուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հավաստել ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը:
- Ընտրողին փոխանցե՛ք Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- Ուղղորդե՛ք ընտրողին դեպի քվեախցիկ:

Ուշադրությո՛ւն

- Եթե ընտրողը չներկայացնի Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայական, Վրաստանի քաղաքացու անձնագիր, հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի, վկայական՝ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ, նրան չպետք է փոխանցեք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:
- Եթե ընտրողը հրաժարվում է նշմարումից, նա իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չպետք է փոխանցեք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:
- Այն ընտրողը, որը ֆիզիկական վիճակի, մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգերը: Ընտրողին ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ փոխանցելիս՝ ընտրողների միասնական ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում պետք է անեք «ֆիզիկական վիճակ» գրառումը և հաստատե՛ք ստորագրությամբ:
- Եթե Դուք կամ ընտրողը վնասեք ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները, այդ մասին անհապաղ տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին և ընտրողին փոխանցե՛ք նոր (Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված) ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:

Ի նկատի ունեցեք.

- ✓ Երաշխավորվում է, որ ընտրողների գրանցում իրականացնողը ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին և 17:00-ին, առանց քվեարկության գործընթացին խանգարելու, վերահաշվի ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իր կողմից տրված ընտրական քվեաթերթիկների քանակները (նախագահին փոխանցված վնասված քվեաթերթիկների քանակը ներառյալ): Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, ընտրողների գրանցում իրականացնողն անհապաղորեն պետք է բացատրագիր գրի, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին:
- ✓ Ընտրողների գրանցում իրականացնողի գործառույթի փոխանցման դեպքում, գրանցողը պարտավոր է կրկին հաշվել ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իր կողմից հատկացված ընտրական քվեաթերթիկների քանակությունները (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված ընտրական քվեաթերթիկների քանակը) և արդյունքների մասին տեղեկացնել հանձնաժողովի նախագահին, տվյալների միջև տարբերության հայտնաբերման դեպքում գրել բացատրագիր, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին: